փագիմք որ օր մի սահՀ իրագործէ Գրիգոր ազա իւր խոստմունքը 1։

Մեսնեկեղեցիք որ Նախիջևանու այլ և այլ թաղերուն մէջ չինուած են, ինչպէս Ս. Համբարձման, Աստուածամօր, Ս. Նիկողայոսի, Ս. Գէորգայ, Ս. Թորոսի, մասնաւոր յիշատակութեան արժանաւոր բան չունին։ Ի յիշատակ համանուն կաթողիկէ եկեղեցեաց, անշուշտ չինած են Նախիջևանցիք, քաղաքին հիմն օրհնուելուն պէս՝ փայտաշէն եկեղեցիք, ուր և դեռեղուած են Ղրիմէ բերած սրբազան համանուն եկեղեցեաց սպասքը և սրբազան անօթները, և ապա ժամանակ անցնելէն վերջ՝ փայտաշէնք ի քարաշէն փոխուած են։ Ս. Լուսաւորչի ընդարձակ բակին մէջ տեսնելով քառակուսի մատրանաձև փոքրիկ անդուռն և անպատուհան չէնք մի, որ սրբոյն պատկերը կը կրէր վրան, հարցուցի թէ ինչ վախճանի համար է. ինձ պատասխանեցին թէ հին եկեղեցւոյն խորանին տեղն է, որ ոտնակոխ չլինելու համար պատապատրել է Յովհաննէս ազա Փոխուեան 2։

Խորհուրդ կու տամ ես ամէն հայ ճանապարհորդի, նախ հեռուէն և ապա ի մօտոյ լաւ մի զննել գերեզմանոցի Ս. Կարապետ նորաշէն եկեղեցին որ իւր ճարտարապետութեամբ և վայելուչ կոնաձև

1. Պ. Կարապետ Եղիան արդէն 10–15 տարիներէ ի վեր գրած է Ս. Պետերբուրգէն առ ակնառուր Նախիջևանցիս, որ սոքա թանգարան մի չինեն քաղաքին մէջ ամէն տեսակ հնութիւններ պահպանելու համար. սակայն ցայսօր ժամանակի այս կարևոր բանին հոգ տանող չէ եղած։

2. Յովհաննէս ազա փոխուեան այծմ հանգուցեալ 100000 րուբլեայ գումար յօգուտ ազգային բարեգործական հաստատութեանց, քան յողնութեան մէջոց տուածներէն։